ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Փորձ. և կլինիկ. բժշկ. հանդես

VIII, № 5, 1968

Журн. экспер. и клинич. медицины

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ

(ծննդյան 850-ամյակի առթիվ)

Հայաստանի հազարամյա բժշկագիտության պատմության մեջ քիչ չեն այնպիսի ականավոր բժիշկ գիտնականները, որոնք իրենց ստեղծագործ աշխատանքով հարստացրել են հայկական բժշկագիտությունը և համաշխարհային փառքի հասցրել այն։

Նրանց շարքում իր պատվավոր տեղն ունի միջնադարյան Հայաստանում զարգացող բժշկական մշակույթի կարկառուն ներկայացուցիչ, բժշկապետ Մխիթար Հերացին, որի անունը թանկ է յուրաքանչյուր հայի համար։

Հայաստանի բժշկական հասարակայնությունը, ամբողջ հայ ժողովուրդը նախապատրաստվում է հանդիսավորությամբ նշելու մեծանուն բժշկապետի ծննդյան 850-ամյակը։

Մխիթար Հերացին ծնվել է Հեր (այժմ Խոյ՝ Պարսկաստանում) քաղաքում, 12-րդ դարի սկզբներին, սակայն նրա ծննդյան ստույգ տարեթվի վերաբերյալ որոշակի տվյալներ չկան։ Պահպանվել են մի շարք պատմական փաստեր, որոնք մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ նա ծնված պետք է լինի 1110-ական թվականներին, և հավանաբար, հենց 1118 թվին։

Դեռևս մանկական հասակից նա մեծ սեր էր տածում դեպի գիտությունը, մասնավորապես՝ դեպի բժշկագիտությունը։ Նա իր ժամանակի կրթված և զարգացած մարդկանցից էր. հետաքրքրվում էր փիլիսոփայությամբ և աստղաբաշխությամբ, տիրապետում էր ժամանակի կուլտուրական լեզուներին, ուսումնասիրում էր արաբերեն, պարսկերեն և հունարեն գրական աղբյուրները։ Մեր ձեռքի տակ չկան փաստեր, թե որտեղ և ում մոտ է նա ստացել իր բժշկական կրթությունը, հավանաբար՝ Կիլիկիայի հայկական մշակույթի կենտրոններից մեկում։ Մխիթար Հերացու բժշկական, մանկավարժական և գիտական գործունեությունը անցել է Կիլիկյան Հայաստանում, որտեղ 1184 թ. նա ավարտել է իր «Ջերմանց մխիթարութիւն» հանրահայտ աշխատության շարադրանքը, որը այն ժամանակ հայերեն լեզվով գրված առաջին յուրօրինակ բժշկական աշխատանքն էր։ Այն նվիրված էր «ջերմերի», այսինքն սուր վարակիչ հիվանդությունների ուսումնասիրության հարցերին։

Հեղինակը մանրակրկիտ կերպով կանգ է առնում մալարիայի, տիֆային հիվանդությունների, թոքերի տուբերկուլյոզի, բնական ծաղկի, կարմիր քամու, հինդ և վեցօրյա նոպայաձև տենդերի, ինչպես նաև սուր վարակիչ այլ հիվանդությունների ու մարդու օրգանիզմի վրա նրանց թողած բարդությունների կլինիկական պատկերը բնորոշող ախտանիշների, բուժման, սննդի ու խնամքի հարցերի վրա։ Մխիթար Հերացու աշխատության արժեքը ավելի է բարձրանում, եթե նկատի ունենանք, որ իր բժշկությունը նա շարադրել է ոչ թե գրաբար, ինչպես առհասարակ ընդունված էր, այլ ժողովրդի խոսակցական լեզվով, որ «զի դիւրհաս լիցի ամեն ընթերցողաց»։

Նա քաջ ծանոթ է եղել Հիպոկրատի, Գալենի, Պավլոս Էգինացու, Իբն Սինայի (Ավիցեննա) և բժշկագիտության դասական մյուս հեղինակների թողած ժառանգության հետ և օգտվել է նրանց աշխատություններից, հենվելով կիրառական բժշկության ասպարեզում ձեռք բերած իր բազմամյա և հարուստ սեփական փորձի վրա։ Նա քննադատական վերաբերմունք է ցուցաբերել սուր վարակիչ հիվանդությունների մի շարք տեսական և կիրառական կարևոր հարցերի մասին դասական գրականության մեջ տեղ գտած սխալ ու քարացած սահմանումների հանդեպ, այդ հարցերը լուծելով դարաշրջանի ընդհանուր բժշկագիտության մակարդակի համեմատ։ Ավելին, Մխիթար Հերացին դրանց փոխարեն առաջադրում է նոր, կյանքի կողմից հիմնավորված գիտական սահմանումներ և ձևակերպումներ։ Քննարկելով սուր վարակիչ հիվանդությունների ախտածնության հարցերը, նա կանգ է առնում նաև արտաքին միջավայրի՝ մարդու օրգանիզմի վրա բացասաբար ազդող տարբեր գործոնների (աշխարհագրական միջավայր, կլիմայական պայմաններ, աշխատանքի բնույթ, սնունդ և այլն), ինչպես նաև հիվանդի տարիքի և կոնստիտուցիոնալ առանձնահատկությունների վրա։

Ընդունելով հիվանդությունների ախտածնության գործում հին և միջին դարերում գոյություն ունեցող հղահյութային (հումորալ) տեսությունը, Մխիթար Հերացին առաջ է քաշում օրգանիզմի հիմնական հեղուկների ոչ թե քանակական տեղաշարժերի սկզբունքը, այլ դրանց հետ կատարվող որակական փոփոխությունները, ինչպես, օրինակ, «բորբոսնելու» պրոցեսի հանգամանքը։ Դրանով իսկ նա ախտածնության վերաբերյալ առաջ է քաշում միանգամայն նոր և առաջադեմ տեսակետ, հանճարեղորեն կռահելով ինֆեկցիայի գաղափարը։ Հիվանդության ախտորոշման նպատակով Մխիթար Հերացին օգտվել է զննման,

շոշափելու և ունկնդրելու եղանակներից, որոշակի տեղ տալով նաև արտաթորանքների ֆիզիկական հատկությունների քննությանը։ Նա մեծ վարպետությամբ օգտվում էր նաև հարց ու պատասխանի եղանակից (հիվանդի հետ), այդ նպատակով կազմելով որոշակի հաջորդականություն ունեցող հարցերի ցուցակ։ Այդ հարցերին հիվանդների տված պատասխանները օգնում են ոչ միայն հիվանդության ախտորոշմանը, այլ նաև նրա բուժման, կանխագուշակման ու կանխարգելման հարցերի ճիշտ ըմբռնմանը։ Ավելորդ է նշել, որ ժամանակակից բժիշկները շնչին բացառությամբ են օգտվում այդ հարցացուցակից։ «Ջերմանց մխիթարության» մեջ տրված բոլոր հիվանդությունների կլինիկական պատկերը բնորոշող ախտանիշների նկարագրությունները անթերի են և միանգամայն համոզիչ։ Իր աշխատության մեջ Մխիթար Հերացին բազմաթիվ էջեր է նվիրել մալարիային հիվանդությունների բոլոր ինքնուրույն կլինիկական ձևերին, նշելով նրանց հիմնական ախտանիշները։ Նա շեշտում է, որ մալարիան համեմատած մյուս տենդային հիվանդությունների հետ, հեշտ է ախտորոշվում, մինչդեռ թոքերի տուբերկուլյոզի և տիֆային հիվանդությունների ախտորոշումը սկզբնական շրջանում մեծ դժվարություն է ներկայացնում, քանի որ հիշյալ հիվանդությունների բնորոշ ախտանիշները դեռ բացակայում են։

Տենդային հիվանդությունների ախտորոշման գործում Հերացին մեծ տեղ է տալիս հիվանդի ջերմության բնույթին, նրա ճիշտ ըմբռնմանն ու գնահատմանը։ Ջերմության բնույթը նա բացատրում է արյան բորբոսնելու աստիճանով և բորբոսնած նյութը օրգանիզմից դուրս վանելու չափով։

Հիշատակության արժանի է այն փաստը, որ Հերացին իմացել է տիֆային հիվանդությունների հպավարակայնության մասին, խորհուրդ տալով զգուշանալ նման հիվանդներից, դրանով իսկ խույս տալ վարակվելուց։ Նրա ուշադրությունից չեն վրիպում բուժման հետ միաժամանակ նաև հիվանդի դիետայի հարցերը։

Հերացին զգալի տեղ է տվել նաև տուբերկուլյոզին, այն անվանելով «բարակացավ», կամ «հալ ու մաշ ջերմ»։ Այս հիվանդության առաջացման գործում նրա կարծիքով մեծ է թերսնման, օրերով քաղցած մնալու, հոգեկան ապրումների և ֆիզիկական ծանր աշխատանքի դերը։ Այլ կերպ ասած, նա իր ժամանակին նկատել է, որ տուբերկուլյոզը սոցիալական հիվանդություն է։

Խոսելով տենդային հիվանդությունների մասին, նա առանձին տեղ է հատկացնում նաև մարդու աշխատանքի բնույթին, կանգ առնելով դարբնի, հացթուխի և ապակեգործի աշխատանքի պայմանների վրա (կապված բարձր ջերմության հետ)։ Հենվելով կիրառական բժշկության ասպարեզում ունեցած իր բազմամյա, հարուստ փորձի վրա, Հերացին բուժում նշանակելիս ելնում էր հիվանդի անհատական առանձնահատկություններից, միաժամանակ կիրառելով ախտանշական երևույթների դեմ նշանակվող բուժման սկզբունքը։ Հատկանշական է այն փաստը, որ միջնադարյան սխոլաստիկայի և դոգմատիզմի թանձր խավարի պայմաններում հայ բժշկապետը մերժում է Գալենի մեկուսիկ ախտաբանության հետադեմ տեսակետը և կանգնում օրգանիզմի ամբողջական, միասնական լինելու առաջադեմ գաղափարի վրա։ Այդ կապակցությամբ նա գրում է, որ բոլոր հիվանդությունների ժամանակ ինչ-որ չափով նվազում է մեր մարմնի բոլոր օրգան-համակարգությունների գործունեությունը, որը լրիվ դադարում է միայն մահվան դեպքում։

Հերացին հիվանդության կլինիկական արտահայտման գործում որոշակի տեղ է տալիս նաև օրգանիզմի դիմադրողականությանը։ Նա նշում է, որ երկարատև տենդային հիվանդության հետևանքով հյուծված, ուժասպառված մարդկանց մոտ տուբերկուլյոզը ընթանում է առանց ջերմության։

Հերացին կողմնակից էր հիվանդությունների կանխարգելմանը և վաղ բուժմանը։ Այդ կապակցությամբ նա գրում է, որ ամեն մի թեթև համարվող ախտաբանական երևույթի վրա անհրաժեշտ է ժամանակին ուշադրություն դարձնել ու բուժել, այլապես այն կարող է զարգանալ և դառնալ անհաղթահարելի։

Հայտնի է, որ հնում, նույնիսկ մինչև 19-րդ դարը, գրեթե ամեն մի հիվանդության բուժման նպատակով հիվանդից արյուն էին բաց թողնում, որից հիվանդները հաճախ մեռնում էին։ Հերացին պահանջում է այդ գործողությունը կատարելիս հաշվի առնել հիվանդի օրգանիզմի դիմադրողականությունը, հիվանդության բնույթը, զարգացման փուլերը և այլն։

Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատությունը հայերեն լեզվով առաջին անգամ հրատարակվել է 1832 թ. Վենետիկում։

Անցյալ դարի 40-ական թվականներին Կ. Նեյմանը, իսկ այնուհետև Լ. Շուլանը, Է. Լեգրենը և ուրիշներ, անդրադարձել են Մխիթար Հերացու աշխատանքներին։ Հերացուն ուսումնասիրելու գործում շնորհակալ աշխատանք է կատարել հատկապես գերմանացի գիտնական Էրնստ Զեյդելը. նա Հերացուն ուսումնասիրելու նպատակով սովորում է գրաբար, «Ջերմանց մխիթարութիւնը» թարգմանում գերմաներեն և 1908 թ. հրատարակում։ Այդ աշխատության առաջաբանում Զեյդելը հայ բժշկապետի մասին գրում է. «Երբ մենք առանց կանխակալ կարծիքի միմյանց հետ ենք համեմատում «Ջերմանց մխիթարությունից» ընդամենը մի քանի տասնյակ տարի առաջ գրած Հելդեգարդի «Բնագիտությունը» Հերացու ստացած արդյունքի հետ, ապա գտնում ենք, որ վճռականորեն վերջինիս պետք է տալ դափնեպսակը՝ բնության ավելի արմատական իմացության, ավելի հետևողական և ավելի ինքնուրույն մտածողության, ինչպես նաև սխոլաստիկական նախապաշարմունքից լիովին ազատ լինելու համար»։

Մխիթար Հերացու ժառանգության վերաբերյալ զգալի գործ է կատարել հայ բժշկապատմաբան Վահրամ Թորգոմյանը։ Անցյալ դարի վերջերին հայ և ֆրանսիական մամուլում տպագրելով մի շարք հոդվածներ Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» գրքի մասին, ինչպես նաև զեկուցումներ կարդալով Փարիզի բժշկական ակադեմիայում, նա մեծ հետաքրքրություն առաջ բերեց ինչպես արևմտյան Եվրոպայի, այնպես էլ մեր բժշկագիտության և բանասիրության մեջ։

Մեզ մոտ Հերացու ուսումնասիրությամբ զբաղվել են պրոֆ. պրոֆ. Լ. Ա. Հովհաննիսյանը, Խ. Ա. Մելիք-Փարսադանյանը և Ա. Ս. Կծոյանը։

ՀՍՍՀ ԳԱ հայ բժշկության և կենսաբանության պատմության նախկին սեկտորի աշխատակիցները «Ջերմանց մխիթարութիւն»-ը թարգմանեցին ռուսերեն և բնագրին կցելով ընդարձակ ուսումնասիրություն ու ծանոթագրություններ, հրատարակեցին 1955 թ.։

Մխիթար Հերացու և նրա խիստ արժեքավոր բժշկարանի մասին զանազան լեզուներով առանձին տարեգրություններում, հանրագիտարաններում, մենագրություններում, դասագրքերում և պարբերական մամուլում լույս են տեսել մեծ թվով հոդվածներ։ Առանց բացառության, բոլոր հեղինակներն էլ բարձր

են գնահատում բժշկագիտությանը Մխիթար Հերացու մատուցած ծառայությունները։

Ամփոփելով այս ամենը, կարելի է ասել, որ միջնադարի հայ ականավոր բժիշկ Մխիթար Հերացու՝ մեծ հումանիստի ու պայծառ մտածողի մեծարժեք աշխատությունը դուրս է գալիս ազգային նեղ շրջանակներից և ձեռք բերում միջազգային նշանակություն, որով հերքվում է «եվրոպացենտրիզմ» կեղծ գիտական կոնցեպցիան այն մասին, որ իբր միջին դարերում ամենուրեք գիտությունները գտնվում էին անկման ու լճացման շրջանում, և որոնք նորից սկսում են զարգանալ 16-րդ դարից սկսած, այն էլ բացառապես Եվրոպայում։

Ա. Ս. ԿՄՈՅԱՆ,
Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ